ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԲԵՄԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԼԵՎՈՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ գեղարվեստական, սոցիոլոգիական, հոգեբանական և փիլիսոփայական երկերում հաճախ են աշխարհը համեմատում թատրոնի հետ, իսկ կյանքը՝ խաղի: Ընդ որում՝ սոցիոմշակութային իրականության թատերայնացումը գերազանցապես դիտվում է որպես բացասական երևույթ, քանի որ այն քողարկում, կեղծում և աղճատում է իրականությունը, վերջինիս արհեստականության երանգներ է հաղորդում, ուստիև օտարվում է մարդկային իրական ապրումներից և ի վերջո՝ «ճշմարտությունից» (ասվածը հատկապես նկատելի է լուսավորական շարժման ներկայացուցիչներ Դիդրոյի, Ռուսոյի, Ֆիլդինգի, ինչպես նաև ավելի ժամանակակից մտածողներ Գի Դեբորի, Բոդրիարի և այլոց աշխատություններում): Սակայն խնդիրն այն է, որ թատերայնացումը եղել և մնում է սոցիոմշակութային իրականության կազմակերպման հիմնարար սկզբունքներից մեկը, քանի որ մարդկային-սոցիալական հարաբերություններն ինքնին ձևավորվում են հենց թատերայնացման, բեմականացման սոցիոմշակութային աշխատակարգի միջոցով: Բանն այն է, որ մարդը սոցիալական կյանքի բեմահարթակում բոլորովին այլ ձև և բովանդակություն ունի, քան այն դեպքերում, երբ «ինքն իր հետ» է. հանրության մեջ նա անհրաժեշտաբար ներկայանում է սոցիալական ինչ-որ դիմակով, որը նրան հնարավորություն է ընձեռում գործելու, ներկայանալու հանրությանը հասկանալի դիմակի «թարգմանված» բովանդակությամբ: Այս համատեքստում մարդն ունի գործունեության երկու ոլորտ՝ հրապարակային և անձնական: Եթե աշխարհի թատերայնացումը միշտ զբաղեցրել է մարդու ստեղծագործական միտքը, ինչը, օրինակ, արտահայտված էր դեռևս անտիկ հունական ողբերգություններում և կատակերգություններում, ապա հրապարակայինի և անձնականի, թատերականի և իրականի, խաղի և կյանքի հարաբերակցության խնդիրը ստեղծագործողների ուշադրության կենտրոնում է հայտնվել հատկապես այն ժամանակահատվածից սկսած, երբ ծնունդ է առել զանգվածային մամուլը (17-18-րդ դարեր), իսկ ժամանակակից աշխարհում, որը հաճախ բնութագրվում է որպես տեղեկատվական հասարակություն, հրապարակայինի և անձնականի, իրականի և խաղի սահմաններն ավելի ու ավելի անորոշ են դառնում: Տեղեկատվական տեխնոլոգիանե-

րի, սոցիալական ցանցերի միջոցով մերօրյա իրականությունում բեմականացվում են սոցիոմշակութային կյանքի գրեթե բոլոր ոլորտները: Այս համատեքստում ֆրանսիացի սիտուացիոնիստ փիլիսոփա Գի Դեբորը իրավացիորեն նկատում է, որ ժամանակակից հասարակություններում ամբողջ կյանքը ներկայանում է որպես մի մեծ հանդիսություն, որտեղ այն, ինչ ժամանակին ուղղակի ապրվում էր, այժմ հանդես է գալիս որպես ներկայացում[1]: Նշված սոցիոմշակութային իրողությունը քննարկվել և տարբեր կերպ է կոչվել ժամանակակից բազմաթիվ փիլիսոփաների կողմից: Օրինակ՝ ֆրանսիացի հայտնի պոստմոդեռնիստ Ժ. Բոդրիարը այն կոչում է սիմուլյատիվ իրականություն, մեկ այլ ֆրանսիացի հայտնի մտածող Պ. Բուրդյեն՝ խորհրդանշանային իրականություն, ամերիկացի սոցիոլոգ Ի. Հոֆմանը՝ սոցիալական դրամատուրգիա, ամերիկացի մեկ այլ սոցիոլոգ Է. Միլդգրեմը՝ թատերայնացված իրականություն և այլն: Հարկ է նկատել, որ հրապարակայինի, թատերականի, վիրտուալի ու իրականի փոխհարաբերություններով զբաղվող այս մտածողները մտավախություն են հայտնում, որ հրապարակայինը, գերիրականը, սիմուլյատիվը, նշանն ի վերջո գլուխ կբարձրացնեն իրականի նկատմամբ և կդառնան ավելի «իրական», քան իրականությունն է ինքնին, ինչը բնականաբար պարունակում է սոցիոմշակութային մի շարք ռիսկեր և վտանգներ: Այս համատեքստում տեղին է այն մտահոգությունը, որ «ժամանակակից մարդը դատապարտված է իր կյանքն անցկացնելու մշտական «կառնավալային» անձանձիր իրավիճակում»[2]: Ասվածը հատկապես արդիական է, երբ խոսքը սոցիոմշակութային կյանքի կազմակերպման այնպիսի մի կարևոր ոլորտի մասին է, ինչպիսին քաղաքականությունն է:

Ժամանակակից աշխարհում սոցիոմշակութային կյանքի այլ ոլորտների նման քաղաքական կյանքում ևս բեմը և բեմականացումը, թատրոնը և թատերայնացումը քաղաքական գործընթացների անբաժան մասն են[3]: Քաղաքական կյանքի թատերայնացումը դրսևորվում է ինչպես քաղաքական իրական գործընթացների կազմակերպման, ուղղորդման ընթացքում, այնպես էլ սոցիալական տրամասության (դիսկուրսի) դաշտում, ինչն արտահայտված է լայն տարածում գտած քաղաքական խաղ, քաղաքական բեմ, քաղաքական խաղի կանոններ և այլ հասկացությունների տեսքով: Քաղաքական կյանքի՝ թատրոնային հասկացություններով նկարագրությունը հուշում է, որ գործ ունենք թատրոնի ինքնատիպ տեսակի հետ, որի խաղարկման դաշտը և՛ «փողոցն» է (հրապարակը), և՛ մեդիան (ԶԼՄ-ները, տեղեկատվական և սոցիալական կայքերը որպես մեկ ամբողջություն): Քաղաքականությունը, լինելով սոցիալական իրականության բաղկացուցիչ մաս, նույնպես

---

[1] Տե՛ս **Дебор Г**. Общество спектакля. М., 2000, էջ 12:

[2] **Գ. Ա. Սողոմոնյան**, Սոցիոմշակութային փոխակերպումներ և մարդաբանական ճգնաժամ, Եր., 2018, էջ 158:

[3] Տե՛ս **Weber S.,** Theatricality as Medium, New York, 2004, էջ 31:

ենթարկվում է սոցիալական ներկայացման տրամաբանությանը՝ իրեն հատուկ խաղացանկով, դերերով, սյուժեով, լեզվով, պատմություններով և այլն: Քաղաքական կյանքում փոխվում են դերակատարները, իրադարձությունները հաջորդում են իրար, սակայն քաղաքական կյանքի բեմականացման տրամաբանությունը գրեթե անփոփոխ է մնում: Օրինակ՝ աշխարհում տեղի ունեցած հեղափոխությունները իրենց պատճառներով, ընթացքով և այլ առանձնահատկություններով տարբեր են, սակայն առանցքային սյուժեն, դերերի բաշխվածությունը, իրադարձությունների առասպելականացումը, չարի և բարու հակադրությունը, որոշ դեպքերում անգամ կարգախոսներն ու լեզուն նման են, այսինքն՝ բեմից բեմ, խաղացողից խաղացող ներկայացումը այլ տեսք և ձև է ստանում, սակայն բովանդակությունը գրեթե նույնն է: Այս համատեքստում քաղաքական կյանքը կարելի է դիտարկել որպես ինքնատիպ խաղի տեսակ՝ քաղաքական թատրոն, որը իր հերթին բաղկացած է քաղաքականության բեմահարթակից, ետնաբեմից և հանդիսասրահից: Քաղաքական թատրոնի անուղղակի մասնակիցը այս դեպքում հանդիսատեսն է, որի ուշադրությունը ուղղված է քաղաքականության բեմահարթակին, իսկ անմիջական մասնակիցը քաղաքական գործիչ-դերասանն է, որը խաղում է քաղաքականության բեմում:

Քաղաքականության՝ իբրև հրապարակային գործունեության տեսակի ի հայտ գալը պայմանավորված է արևմտաեվրոպական սոցիոմշակութային տարածքում 17-18-րդ դարերում տեղի ունեցած քաղաքակրթական մի շարք փոխակերպումներով: Մասնավորապես տնտեսության արդյունաբերականացումը զարգացրեց քաղաքներն ու քաղաքային մշակույթը, ձևավորվեց քաղաքաբնակների՝ բուրժուաների մի նոր դաս, որը սկսեց մասնակցել հասարակության կառավարման գործերին, ինչը մինչարդյունաբերական հասարակություններում գերազանցապես ազնվականության մենաշնորհն էր: Պատմության զարգացման տրամաբանությունը հուշում է, որ քաղաքակրթական փոխակերպումներին անհրաժեշտաբար հաջորդում են նաև քաղաքական փոխակերպումները: Դժվար է պատկերացնել, թե ինչպես էր գործառելու ժամանակակից աշխարհում տարածում գտած մասնակցային ժողովրդավարության քաղաքական կազմակերպման մոդելը, եթե 18-19-րդ դարերում չստեղծվեր տպագիր մամուլը, որը քաղաքական գործընթացներից հեռու պահվող հպատակ ժողովրդին հնարավորություն տվեց փոխակերպվելու քաղաքական գործընթացների անուղղակի մասնակցի: Եթե մինչ տպագիր մամուլի ձևավորումը քաղաքականության օրակարգ թելադրողը բացառապես հասարակության իշխող վերնախավն էր՝ թագավորներ, իշխաններ, ազնվականներ և այլն, ապա դրա տարածումը նաև հասարակության լայն շերտերին հաղորդակից դարձրեց քաղաքականությանը:

18-19-րդ դարերում լայն տարածում գտած տպագիր մամուլը ձևա-

վորեց միևնույն տեղեկատվությունից օգտվող և այդպիսով միևնույն հուզական ու մշակութային դաշտում գտնվող հանդիսատես-ամբոխին, ինչը սոցիումի՝ իշխանության համար մղվող պայքարի դաշտին՝ քաղաքականությանն օժտեց նոր բովանդակությամբ ու նոր ձևով: Հանդիսատես-ամբոխն արդեն հլու հպատակ չէր, որը ենթարկվում էր իշխող վերնախավի կամքին և քմահաճույքներին. նա արդեն մամուլի միջոցով տեսնում և հետևում էր քաղաքականությանը, կարող էր այս կամ այն քաղաքական խմբի՝ մամուլով տրվող մեկ կանչով հավաքվել հրապարակներում և իրականացնել իշխանափոխություններ, հեղափոխություններ, պահանջել իշխանություններից լինել հաշվետու և հաշվի նստել իր գոյության հետ: Ըստ էության մասնակցային ժողովրդավարության սուբյեկտը՝ քաղաքացին, ձևավորվեց առաջին հերթին հանդիսատես-ամբոխի շարքերում, քանի որ իրականությունը պատկերող և մեկնաբանող պատմություն-տեքստերն այլևս միայն իշխանավորների մենաշնորհը չէին: Կարծիք կա, որ տպագիր մամուլի շնորհիվ ձևավորված հաղորդակցման նոր հնարավորություններն են ընկած դասակարգային տարբերությունների վերացման և հավասարարական հարաբերությունների ձևավորման հիմքում[4]:

Հանդիսատես-ամբոխը, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ, ենթարկվեց փոխակերպումների: ԶԼՄ-ների տարբեր տեսակները՝ տպագիր մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը, ձևավորեցին իրենց հանդիսատեսին: Եթե տպագիր մամուլի հանդիսատեսը ընթերցող մարդն էր, ապա ռադիոյինը՝ լսող մարդը, հեռուստատեսությանը՝ տեսնող մարդը: Սակայն ԶԼՄ-ների այս երեք միջոցների հանդիսատեսն էլ դեռ իրապես քաղաքական գործընթացներին մասնակից քաղաքացին չէր, այլ ավելի շուտ կատարում էր կրավորական ակն- և ունկնդրողի դերը: Վիճակը փոխվեց, երբ ձևավորվեց տեղեկատվական մի նոր տարածություն, որը կոչվում է համացանց:

Ժամանակակից աշխարհում սոցիալական կյանքի կազմակերպման գործում մեծ դերակատարում ունեն տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ ձևավորված տեղեկատվական հասարակության բաղադրիչները՝ սոցիալական և տեղեկատվական կայքեր, բլոգներ, որոնք ԶԼՄ-ների այլ միջոցների հետ՝ հեռուստատեսություն, տպագիր մամուլ, ռադիո, ձևավորում են այն մեդիան, որը ենթարկվում է տվյալ սոցիալական տրամասությանը հատուկ օրինաչափություններին և լեզվամտածողությանը: Այս համատեքստում լեզվական տրամասությունը դառնում է քաղաքական բեմահարթակի բաղադրիչներից մեկը[5]: Ցանցային հասարակությունը ձևավորում է քաղաքական որոշակի տրամասություն, որի շրջանակներում տեղի են ունենում քաղաքական գործընթացները: Այսինքն՝ տեղեկատվական ցանցը ձևավո-

[4] Տե՛ս **Сеннет Р.** Падение публичного человека. М., 2002, էջ 194:
[5] Տե՛ս **Edelman M.**, Constructing the Political Spectacle, Chicago, 1988, էջ 95-100:

ռում է քաղաքական և սոցիալական իրողությունները պատկերացնելու, հասկանալու և մեկնաբանելու լեզու, հասկացություններ: Եթե մինչտեղեկատվական հասարակություններում քաղաքական կյանքի բեմականացումը տեղի էր ունենում փողոցում, ինչն այնուհետև արտահայտվում էր ԶԼՄ-ներում, ապա տեղեկատվական հասարակության ձևավորման հետ մեկտեղ՝ քաղաքական թատրոնը տեղափոխվում է մեդիա դաշտ: Փաստորեն քաղաքականության բեմահարթակը ժամանակակից աշխարհում ոչ միայն փողոցն է, այլև մեդիան:

Տեղեկատվական կամ ցանցային հասարակության ձևավորման նախաշեմին բազմաթիվ տեսաբաններ (Մաքլուհեն, Կաստելս, Թոֆլեր և այլք) կանխորոշում էին, որ տեղեկության տարածման այս նոր տեխնոլոգիաները կնպաստեն տեղեկույթի ազատականացմանը, և ցանցային հասարակության բոլոր անդամները կունենան հավասար հնարավորություններ տեղեկատվության սպառման համար: Այսինքն՝ եթե ժամանակին այս կամ այն քաղաքական, տնտեսական խմբերը, իրենց վերահսկողության տակ պահելով ԶԼՄ-ների արդեն իսկ ավանդական դարձած միջոցները՝ հեռուստատեսություն, ռադիո, տպագիր մամուլ, կարող էին նաև վերահսկել հանրային կարծիքն ու այդ կերպ ազդեցություն ունենալ հասարակության լայն շերտերի գիտակցության և աշխարհընկալման վրա, ապա տեղեկատվական նոր տեխնոլոգիաները (առաջին հերթին՝ համացանցը) կարծես հնարավորություն են տալիս ազատվելու այդ վերահսկողությունից, քանի որ ցանցն ազատ է. այստեղ մարդը ոչ միայն տեղեկատվության կրավորական սպառող է, այլև յուրաքանչյուր պահի սոցկայքի իր էջում մեկնաբանությունների, հրապարակումների միջոցով կարող է ինքը վերածվել տեղեկատվության աղբյուրի, կարող է իր աշխարհընկալումն ու դեպքերի զարգացման իր տեսլականը մատուցել հանրությանը: Սակայն գործնականում այս լավատեսությունը ի չիք դարձավ արդեն նախորդ դարավերջին, երբ պարզվեց, որ տեղեկատվական ցանցերը նույնպես ենթարկվում են իշխանական որոշակի աստիճանակարգության[6]: Տեղեկատվական հասարակության ձևավորման ընթացքը ցույց տվեց, որ ցանցային հասարակության ընձեռած տեղեկատվական ազատությունը կամ քաոսը հնարավոր է պահել վերահսկելիության դաշտում՝ զանազան կեղծ օգտատերերի, տեղեկատվական կայքերի, անգամ սոցիալական կայքերի ընձեռած տեխնոլոգիական հնարավորությունների տիրապետման շնորհիվ: Տեղեկատվական տեխնոլոգիաների և ցանցային հասարակության ընձեռած տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում ոչ միայն անսահմանափակ տարածելու տեղեկություն, այլև կեղծելու իրականությունը, մատուցելու կեղծ իրականություն կամ այլ կերպ ասած՝ բեմականացնելու իրականությունը:

---

[6] Տե՛ս **Бард А., Зодкервист Я**. Netократия. Новая правящая элита и жизнь после капитализма. СПб., 2005, էջ 175-177:

Նշված հանգամանքն է պատճառը, որ ժամանակակից աշխարհի քաղաքական դաշտում պայքար է ընթանում առաջին հերթին ոչ թե գաղափարախոսությունների կամ անգամ տնտեսական ռեսուրսների տիրապետման համար, այլ հենց տեղեկատվական կայանների և հնարավորինս ավելի մեծ ընդգրկում ունեցող սոցիալական ցանցերի ձևավորման համար: Այն քաղաքական ուժը, որը տիրապետում է տեղեկատվական ցանցին, կարող է ընթացիկ քաղաքական գործընթացների շուրջ ձևավորել այսպես կոչված տեղեկատվական աղմուկ և ուղղորդել այն իրեն ցանկալի հունով: Այստեղ տեղին է մեջբերել 20-րդ դարի ֆրանսիացի հայտնի սոցիոլոգ Պ. Բուրդյեի՝ քաղաքականության սահմանումը. «Քաղաքականությունը իշխանության համար մղվող մրցակցային պայքարի դաշտ է, որտեղ պայքարում են անտեղյակների ինչ-որ խմբի կամ հանրության անունից խոսելու կամ գործելու իրավունքի համար»[7]: Փաստորեն սոցիոմշակութային արդի իրողությունների համատեքստում քաղաքական ներկայացման բուն նպատակը դառնում է հանրության՝ հանդիսատես-ամբոխի անունից խոսելը, նրան ներկայացնելը: Իսկ եթե քաղաքական գործիչների նպատակը հանդիսատես-ամբոխի անունից խոսելն է, ապա նրանք առաջին հերթին պետք է հասկանալի լինեն հենց այդ հանդիսատեսին: Այստեղ արդեն ծագում են սոցիոմշակութային մի շարք վտանգներ և ռիսկեր, որոնցից ամենավտանգավորը թերևս ամբոխին բնորոշ աշխարհը առասպելական տեքստերով պատկերացնելն ու մեկնաբանելն է: Դժվար է չհամաձայնել այն մտքին, որ «վտանգը ծագում է այն ժամանակ, երբ դրախտի մարդաբանական առասպելը դուրս է գալիս մետաֆիզիկայի և պոեզիայի երևակայության դաշտից և որպես արդեն սոցիալական առասպել՝ հավակնում է դառնալ սոցիալ-քաղաքական գործունեության ծրագիր»[8]: Սակայն խնդիրն այն է, որ քաղաքական ներկայացման սյուժեի հիմքում չեն կարող ընկած լինել օբյեկտիվորեն ռացիոնալ նախագծեր, քանի որ ռացիոնալությունն ինքնին չի կարող լինել օբյեկտիվ: Ցանկացած բանական նախագիծ իրատեսական է միայն հանրության որոշակի շերտերի համար: Քաղաքականությունը, լինելով հանրության տարբեր շերտերի պահանջմունքների և շահերի բախման բեմահարթակ, կորցնում է ներքին ռացիոնալությունը: Եթե սոցիալական կյանքի քաղաքական փոխակերպումը բխում է հանրության մի շերտի շահերից, ապա այն ռացիոնալ է տվյալ շերտի համար, իսկ մեկ այլ շերտի համար այն կարող է և ռացիոնալ չլինել: Քաղաքականության բեմականացման այս ներքին հակասականությունը հաղթահարելու համար քաղաքական խաղացողներին հաճախ այլ ելք չի մնում, քան իրենց գործունեությունը առասպելական տեքստերով և իմաստներով ծանրաբեռնելը: Քաղաքական գործիչները, հասկանալով ցան-

[7] **Бурдье П**. Социология политики. М., 1993, с. 205.

[8] **Է. Ա. Հարությունյան**, Մարդկային կեցության այլակերպումները, Եր., 2018, էջ 197:

կացած քաղաքական նախագծի օբյեկտիվորեն ռացիոնալ անհնարինությունը, երբեմն իրենց գործունեությունն ու կամք առ իշխանությունը հանրության աչքում արդարացնելու համար ստիպված դիմում են ժամանակի ընթացքում բազմիցս փորձարկված ուտոպիաների, առասպելների օգնությանը: Բանն այն է, որ հանդիսատես-ամբոխը առավել ընկալունակ է առասպելական տեքստերի նկատմամբ[9], իսկ իրականությունը ներկայացնող և մեկնաբանող օբյեկտիվորեն ռացիոնալ տեքստերը այդքան էլ «տեսարժան» չեն հանրության համար: Այս համատեքստում ֆրանսիացի փիլիսոփա Ժ. Բոդրիարը նշում է, որ «զանգվածներին (հանդիսատես-ամբոխին) մատուցում են միտքը, սակայն նրանք հանդիսություն են տենչում»[10]: Իսկ հանդիսությունների հիմքում դարեր ի վեր ընկած են եղել այս կամ այն առասպելները, ուտոպիաները, ծեսերը և այլն: Հաճախ դրանք կապված են որոշակի սրբազան պատմության հետ՝ իրական թե առասպելական, և հրաշալի միջոց են, որի օգնությամբ մարդը հաղորդակցվում է մեծ նախադեպին[11]: Այս է պատճառը, որ քաղաքական թատրոնն անհրաժեշտաբար պետք է առասպելականացվի, որպեսզի լինի տեսարժան, որպեսզի հանդիսատեսին պահի դահլիճում և ստիպի հետևել իրադարձություններին, հակառակ դեպքում նա կլքի այն, կդառնա անտարբեր և անհաղորդ քաղաքական գործընթացներին՝ դրանով իսկ ապալեգիտիմացնելով բեմահարթակում խաղացվող սյուժեն:

Եվ այսպես՝ բեմականացված կամ թատերայնացված քաղաքականությունը ժամանակակից տեղեկատվական հասարակության անքակտելի մասն է: Ինչպես թատրոնում, այնպես էլ քաղաքականության ժամանակակից դաշտում գործընթացները ծավալում են երկու տարածությունում՝ բեմում և ետնաբեմում: Բեմում խաղարկվում է քաղաքական իրականությունը, ետնաբեմում այն նախագծվում է: Թե՛ բեմում, թե՛ ետնաբեմում իրադարձություններն իրական են, սակայն հանդիսատեսը տեսնում է միայն բեմում կատարվողը, իսկ ետնաբեմը նրանից հմտորեն թաքցվում է: Տեղեկատվական հասարակության այս բացն է, որ հնարավորություն է տալիս տարբեր քաղաքական կազմակերպությունների վերահսկողության տակ պահելով տեղեկատվական դաշտը՝ հանրությանը մատուցելու իրենց ցանկալի իրականությունը կամ այլ կերպ՝ բեմականացնելու իրականությունը, ցույց տալու այն, ինչն անհրաժեշտ է, և թաքցնելու այն, ինչը սպառնում կամ վտանգավոր է իրենց իշխանության կամ ազդեցության համար: Նշված հակադրության համատեքստում Ժ. Բոդրիարը, վերլուծելով 1990-ականներին

---

[9] Տե՛ս **Лебон Г., Тард Г.** Психология толп. Мнение и толпа. М., 1998, էջ 274:

[10] **Бодрийяр Ж**. В тени молчаливого большинства, или Конец социального // **Ясперс К**., **Бодрийяр Ж**. Призрак толпы. М., 2014, с. 211.

[11] Տե՛ս **Լ. Աբրահամյան**, Ծեսը, նախաթատրոնը և թատերական հրապարակը, / ԲԵՄ - Թատերական-վերլուծական գրական, գեղարուեստական պատկերազարդ երկամսեայ հանդէս, Եր., 1990, էջ 8:

Պարսից ծոցում ընթացող ռազմաքաղաքական գործողությունները, հրապարակեց հոդվածների եռաշարք, որոնց ամբողջական տարբերակը վերնագրված էր հետևյալ կերպ՝ «Ծոցում պատերազմ չի եղել»: Նա խոսում էր այն մասին, որ ժամանակակից լրատվամիջոցների հաղորդումներում քաղաքական ու ռազմական գործընթացներն այնքան են ձևախեղված, այնքան են կտրված իրականությունից, որ այլևս դժվար է իրականությունը տարբերել պատրանքից, արդեն կարելի է խոսել ոչ թե իրականության, այլ գերիրականության կամ վիրտուալ իրականության, սիմուլյատիվ իրականության, կեղծ իրականության մասին, այլ կերպ ասած՝ «մեր ժամանակներում վիրտուալն առաջանցիկ է իրականի նկատմամբ»[12]: Անշուշտ, Բոդրիարը նույնպես գիտեր, որ Պարսից ծոցի պատերազմը եղել է, սակայն նա նկատում է, որ նույնիսկ եթե այն չլիներ, այն կարող էր «բեմադրվել»:

Քաղաքական կյանքի բեմականացման, թատերայնացման տեսական մոտեցումը հնարավորություն է տալիս վերլուծելու և հասկանալու ինչպես հետխորհրդային (օրինակ՝ ՀՀ-ում), այնպես էլ համաշխարհային քաղաքական գործընթացները ընդունված քաղաքական տրամասության շրջանակներից դուրս: Այս առնչությամբ վերլուծելով հետխորհրդային քաղաքական համակարգերի փոխակերպման տրամաբանությունը՝ Է. Հարությունյանը իրավացիորեն նկատում է, որ հետխորհրդային քաղաքական համակարգերում քաղաքական կյանքը երկատվում է երկու հակադեմ, սակայն փոխլրացնող՝ դեմագոգիկ և ստվերային իրականությունների (այլ կերպ՝ բեմում և ետնաբեմում): Դեմագոգիկ իրականությունում ներիշխանական հակասություններն ու տարբեր թևերի տարաձայնությունները հասարակությանը ներկայացվում են ազգային շահի ու գաղափարական սկզբունքային տարաձայնությունների տեսքով, իսկ ստվերային իրականությունում ներիշխանական հակասությունները կարգավորվում են ուժային լծակների, ֆինանսների ու «կոմպրոմատների» օգնությամբ[13]: Առաջին դեպքում հանրությունը դիտարկվում է որպես անվերջորեն մանիպուլյացիայի ենթակա սոցիալական զանգված, որն ընդունակ չէ քննադատական ռեֆլեքսիայի, իսկ երկրորդ դեպքում՝ ընդհանրապես դուրս է մղվում քաղաքական գործընթացներից, քանի որ քաղաքական ետնաբեմերում տեղի ունեցող գործընթացները գաղտնի են պահվում հանրությունից, իսկ եթե որոշ իրադարձություններ էլ հայտնի են դառնում հանրությանը, ապա դա տեղի է ունենում միայն այն դեպքերում, երբ անհրաժեշտ է քաղաքական որոշակի թևերի նկատմամբ ճնշումներ բանեցնել: Եթե բեմահարթակում քաղաքական կյանքի մշտական ուղեկիցը եղել է դեմագոգիան, պոպուլիզմը և այլն, ապա քաղաքականության ետնաբեմե-

---

[12] **Бодрийяр Ж**. Дух терроризма. Войны в заливе не было. М., 2016, с. 19.

[13] Տե՛ս **Է. Ա. Հարությունյան**, Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Եր., 2000, էջ 233:

ռում քաղաքական կյանքը կազմակերպվել է ստվերային քաղաքականության գործառական տրամաբանությանը համապատասխան միջոցներով:

Այս համատեքստում հայկական քաղաքական կյանքում 2018 թ. ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցած «սիրո և համերաշխության» հեղափոխությունը բեկումնային եղավ վերջին տարիներին լճացման ճանապարհը բռնած հայկական քաղաքական կյանքի համար: Անպատկերացնելի թվացող երևույթները դարձան իրողություն, քանդվեցին նախկինում գործառող իշխանական ենթակարգությունները, մեդիա-տրամասության դաշտ ներմուծվեցին քաղաքական նոր հասկացություններ, կարճ ասած՝ «իրողություններ փոխվեցին»: Սակայն եթե դեռ դժվար է ասել՝ այդ քաղաքական իրադարձությունները հանգեցրե՞լ են քաղաքական հեղափոխության, թե՞ պարզապես նախկին քաղաքական վերնախավը փոխարինվել է նորով, ապա մեկ բան ակնհայտ է. եղել է հասարակական տրամադրության հեղափոխություն: Նախկին իշխանությունների՝ կառավարման համակարգի, մեդիայի և ընտրությունների վերահսկման ու ուղղորդման պատճառով հայաստանյան հասարակությունը կարծես թե օտարվել էր քաղաքական իրադարձություններից, որի հետևանքով քաղաքականության նկատմամբ համակվել էր ցինիզմով և անտարբերությամբ՝ երբեմն դիմելով սոցիալական ընդվզման այլևայլ ճանապարհների՝ սոցիալ-քաղաքական բողոքից, արտագաղթից մինչև իսկ պետության անվտանգության տեսանկյունից ամենավտանգավոր ձևին՝ զինված ապստամբությանը կամ ահաբեկչությանը: Իշխանական նախկին վերնախավը, հաշվի առնելով այն իրողությունը, որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և կապիտալիստական հասարակարգին բնորոշ դրամատիրական սոցիալական հարաբերությունների գերակայության պայմաններում իշխանությունը պահելու համար կարևորը ոչ թե ժողովրդին, ազգին կամ պետությանը ծառայելն է, այլ պարզապես այդ գործոնները կիրառելով՝ հասարակությանը ենթակայության և վերահսկելիության տակ պահելը, ուստի հասարակությանն օտարելով քաղաքական գործընթացներից՝ իր համար ձևավորել էր անվտանգության երաշխիքներ: Այդ պատճառով ժողովրդական տարերային ընդվզումը հանկարծակիի բերեց ոչ միայն իշխանություններին, այլև ողջ հասարակությանը: Բանն այն է, որ նախկին իշխանական համակարգը, ժամանակին լավագույնս յուրացնելով ֆրանսիացի հայտնի սոցիոլոգ Պ. Բուրդյեի «խորհրդանշանային քաղաքականության» տեսության գործնական, կիրառական կողմերը և, քաղաքական կյանքին վերաբերվելով թատրոնի և թատերայնացման տրամասության տրամաբանությամբ, հետհեղափոխական շրջանում չկարողացավ պատշաճորեն ինքնակազմակերպվել և կարծես թե հայտնվեց քաղաքական կյանքի լուսանցքում: Եվ իսկապես, եթե քաղաքական կյանքն ընդամենը թատերայ-

նացման մի հարթակ է, որի բեմահարթակային (դեմագոգիկ) և ետնաբեմային (ստվերային) կողմերը գտնվում են վերահսկելի ենթակայության տակ, ապա այդ ինչպե՞ս ստացվեց, որ մեր քաղաքական կյանքի երբեմնի ռեժիսորները, սցենարիստներն ու դերասանները հայտնվեցին քաղաքական թատրոնի լուսանցքում և կարծես թե դուրս մղվեցին դահլիճից: Բանն այն է, որ քաղաքական նոր վերնախավը ավելի լավ հասկացավ ցանցային հասարակության՝ ամբոխին բնորոշ հոգեբանությունը և առաջարկեց քաղաքական թատրոնի մի նոր տեսակ, որը պայմանականորեն կարելի է կոչել ինտերակտիվ-մասնակցային ներկայացում: Նոր վերնախավը, ի տարբերություն նախորդի, ցանցային ամբոխին հրավիրեց մասնակցելու քաղաքական գործընթացներին: Ընդ որում՝ առաջարկեց նաև մասնակցության ձևաչափը՝ տարբեր բնակավայրերի տարբեր հատվածներում փողոցներ փակել, իշխանության կենտրոնից հեռու գտնվող, սակայն իշխանության բնականոն գործունեությունն ապահովող ինստիտուտների աշխատանքը խաթարել, սոցիալական ցանցերում մեկնաբանությունների և հավանությունների միջոցով անընդհատ տեղեկատվություն ապահովել, տարածել և քաղաքացիական անհնազանդության այլևայլ ձևեր կիրառել: «Սիրո և համերաշխության» հեղափոխության հիմքում փաստորեն ընկած էր այն սկզբունքը, որ անհրաժեշտ էր իրականացնել քաղաքացիական անհնազանդության այնպիսի գործողություններ, որոնք հնարավոր չլիներ վերահսկել կենտրոնի կողմից, որոնք կազմակերպելու և ուղղորդելու համար կազմակերպված ենթակարգության կարիք չկար: Այստեղ հարկ է նշել, որ «սիրո և համերաշխության» հեղափոխության տրամասությունը քաղաքացուն առաջարկում էր քաղաքականության հանդիսատեսից վերածվել քաղաքականություն կերտողի, մասնակցի: Եթե մինչ այդ քաղաքացին զուտ «թամաշա էր անում» հանրահայտ քաղաքական դեմքերի միջև մրցակցությանն ու ժամանակ առ ժամանակ ընտրություններին մասնակցում էր միանգամյա քաղաքացիական պարտքին հավատարիմ մնալու կամ այլևայլ նպատակներով, ապա «սիրո և համերաշխության» հեղափոխությունը հնարավոր դարձավ քաղաքացու գործուն մասնակցությամբ միայն: Այս է պատճառը, որ քաղաքական հեղափոխության առաջնորդի գործունեությունը առաջին հերթին ուներ ուղղորդիչ բնույթ: Նա կոչ էր անում, իսկ քաղաքացին գործում էր. փակում էր փողոցները, նստացույց էր անում, դասադուլ, գործադուլ և այլն: Այսինքն՝ քաղաքացին «սիրո և համերաշխության» հեղափոխության ընթացքում իսկապես հանդիսատեսից վերածվել էր քաղաքականություն կերտողի: Քաղաքական թատրոնի բեմահարթակը, ետնաբեմն ու դահլիճը կարծես միախառնվել էին՝ վերածվելով գործունեության մի ամբողջական դաշտի, որտեղ ստվերային և դեմագոգիկ իրականությանը փոխարինելու էր եկել պրագմատիկ արկածախնդրությունը: Քաղաքացին, որն այլևս հանդիսատես չէր, նորեն

սկսեց հուսալ, որ իր կյանքի տնօրինումն արդեն կախված է ոչ թե իշխող վերնախավի կամայականություններից, այլ հենց անձամբ իրենից և իր իսկ կողմից պատվիրակված իշխանության ներկայացուցիչներից, որոնց ինքն արդեն դիտում էր որպես հավասար, որպես իրենցից մեկը: Այս իմաստով՝ քաղաքական կյանքից վերացավ երբեմնի աստիճանակարգությունը, քաղաքացին ձևավորեց իշխանության հետ հարաբերվելու նոր մշակույթ՝ հիմնված հորիզոնականության և հաշվետվողականության սկզբունքների վրա, ինչը, իհարկե, հնարավոր դարձավ շնորհիվ ցանցային և տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ կիրառման:

Սակայն «սիրո և համերաշխության» հեղափոխության հետևանքով հայաստանյան սոցիումը հայտնվել է մի նոր մարտահրավերի առաջ, որն է՝ քաղաքացու կեցվածքի տիպականացումը: Բանն այն է, որ քաղաքացիական կեցվածքի հասարակական կայացումը չի կարող լինել մեկանգամյա գործողության արդյունք. այն քաղաքացիական գործողությունների, արժեքների, նորմերի մի ամբողջ համակարգ է, որը եթե նոր ձևավորված քաղաքական համակարգի կողմից հետևողականորեն չխրախուսվի հանրային կյանքում, կրկին կհայտնվի «ի չգոյե ժամանակի» կարգավիճակում: Եթե հեղափոխության ընթացքում քաղաքացու կեցվածքը թելադրված էր պրագմատիկ արկածախնդրության գործառական տրամաբանության սկզբունքով, ապա հետհեղափոխական շրջանում այն պետք է վերածվի կեցութաձևի, այսինքն՝ պետք է տիպականանա հանրային կյանքում: Հակառակ դեպքում ձևավորված քաղաքական նոր համակարգը աստիճանաբար կհայտնվի նախկին համակարգի ինստիտուցիոնալ արատների շղթայում, որոնցից քաղաքական համակարգի առողջացման տեսանկյունից ամենաապակառուցողականը թերևս քաղաքական կյանքի թատերայնացումն է, որտեղ քաղաքացին, ինչպես հիշում ենք, զուտ հանդիսատեսի կարգավիճակով էր և մասնակիցը չէր ո՛չ քաղաքականության բեմում խաղացվող դեմագոգիկ գործընթացների, ո՛չ էլ ետնաբեմի ստվերային գործընթացների: Քաղաքական նոր համակարգի համար կենսական խնդիր պետք է դառնա քաղաքացու կեցվածքի տիպականացումը, եթե, իհարկե, քաղաքական այդ նոր համակարգը հավատարիմ է իր հայտարարած ժողովրդավարության, թափանցիկության, քաղաքացիականության արժեքներին և սկզբունքներին:

Բանալի բառեր – *քաղաքական ներկայացում, քաղաքականության բեմականացում, տրամադրության ժողովրդավարություն, ցանցային հասարակություն, ստվերային և դեմագոգիկ իրականություն, ինտերակտիվ քաղաքականություն*

ЛЕВОН БАБАДЖАНЯН – *Трансформация театрализации политической жизни в современных политических процессах.* – Политика –публичный вид деятельности и неизбежно содержит элементы театральности и постанов-

очности. Формирующееся ныне информационное сетевое общество трансформирует функциональные особенности политического театра. Если до возникновения этого общества публика участвовала в политической игре как пассивный наблюдатель, то с его формированием политика приобретает черты интерактивного театра. В социокультурной среде важными характеристиками политической игры становятся неопределённость политического сюжета, элементы прямой демократии, непредсказуемость и неконтролируемость политических процессов, а также усиливается влияние информационных технологий.

Ключевые слова: *политическое представление, театрализация политики, демократия настроения, теневая и демагогическая реальность, сетевое общество, интерактивная политика*

LEVON BABAJANYAN – ***Transformation of the Theatricalization of Political Life in the Context of Current Political Processes***. – Politics is a sphere of public activity, and as such contains some elements of theatricality and substitution. The formation of network society transforms the functional features of political theater. If at the first stage of the formation of the network society, the public participated in political game as a passive spectator, then through the formation of the network society, politics is theatricalized according to the principles of interactive theater. In the sociocultural environment of the network society, the uncertainty of the political plot, the elements of direct democracy, the rise of the level of influence of information technologies, the unpredictability and uncontrollability of political processes become important characteristics of the political game.

Key words: *political representation, theatricalization of politics, democracy of mood, shadowed and demagogic reality, network society, interactive politics*

Ներկայացվել է՝ 22.11.2018, գրախոսվել է՝ 14.01.2019, ընդունվել է տպագրության՝ 27.02.2019